

Մ Ո Ւ Ր Բ Ղ Ա Ջ Ա Ր

Հանդիպում կը հրատարակենք հոս, թարգմանաբար, Laurence Dakin Քանադացի քերթողին այս յօդուածը, զոր հեղինակը 1940ի Սպրինգֆիլդի մէջ պատրաստեց էր Բազմալեզու համար, բայց չէր կարողացած ուղարկել մեզի՝ պատերազմին պատճառով։ Սոյն հայաստէր, համակրելի քերթողի մասին տուած ենք արդէն քանի մը համառօտ տեղեկութիւններ, 1934, Սեպտ.-Հոկտ. թիւին մէջ (էջ 350), երբ միեւնոյն ատեն հրատարակեցինք քանի մը նմոշներ իր Ապարիտի Երազը քերթուածէն։

«Անկառնոյց կը դիտէր, նստած, կղզի մը ներհող ծոցն Ադրիոյ, ուր հագել վէտ վէտ ալեք մը ծըփուն կը խորտակէր լըռութիւնն աւազանիստ ափերուն»։

Սրաթուիշ արեւը, ինչպէս հրեղէն գունդ մը լայնածաւալ, դադարեցաւ եթերային Աւպեանց սարերու վրայ, անդորր լճակին մէջ հոսելով բոցեղէն հսկայ ալիքներ։ Ձկնորս մը, հոս ու հոն ծանծաղուտ անշարժ ջուրերու մէջ, նեղ ճամբայ մը կը պրպտէր, իր փոքրիկ բերտ նաւակը յառաջ մղելու համար։ Մօտիկը, տաքարիւն ծիծառներ, վէտ վէտ ալեակները քերելով՝ կ'արձգէին ուրախութեան ճիւղեր։ Լոյսի քանի մը յետին ճաճանչներ կը սլանային տանջուած երկնքին մէջ և յետոյ կ'անհետանային ուժասպառ սլաքներու պէս։ Օրը վերջացեր էր։ Մի քանի կանգուն հեռու, մեղմիկ ջուրերու մէջ, կղզի մը երազկոտ կը նշմարուէր անդորր մթնշաղին մէջ։

Խորհրդաւոր նոճիներու ընդմէջէն, որոնք կը պատէին մենաստան մ'աշտարակաւոր, կը տեսնէի ես արեղաներ որ կը շրջէին ու կը խորհէին, իւրաքանչիւրն առանձին՝ Աստուծոյ հետ, իւրաքանչիւրն ըմբոշինելով անդորր գեղեցկութիւնը իրիկուան։ Այս այնք

գոյամիճակին, ինքնագարգացման և ազատութեան։ Սերայեւոյի ոճիւրը (1914) երկուան Տանցիկը ստեղծեց, ու Տանցիկը՝ մարդկութեան աղէտներուն ահաւորագոյնը. ներկայ քաղաքական շարժումները նորանոր Տանցիկներ պիտի չկերտեն արդեօք։ 1918-ի պատերազմէն ապրին վէր-

քան պարզ ու խաղաղ տեսարանը իմ աչքերէս արցունք քաղեց. ու ես ըմբռնեցի սրտին անխռով անայլայլ բարախիւնը, անոր պէտքերն, ու զգացի բոկոտն արեղաներու անխօս պատգամը՝ իրենց խուզերուն մէջ. լսեցի շնչող հովիկն ու գիտցայ որ աստղերը կ'երգէին իրենց ընթացքին մէջ, և ինչո՞ւ...

«Երեկորին կոչնակ՝

Քաղցրահունչ զանգն ընդհատեց իր խոկուններն երազկոտ»։

Բաց, երկնասլաց աշտարակէն մեղմիկ զանգակը իր կոչը կը հնչեցնէր, և արեղաները՝ մի առ մի՝ պարտէզէն կը դիմէին եկեղեցի, ուր իրենց հոգիները, լուծեան ու խուճկի ամպերու մէջէն, պիտի սլանային դէպի երկինք։ Գիտէին անոնք թէ հոն է ու հոն կը բնակի Աստուած կենդանի, և թէ մենք չպիտի մեռնինք, ոչ. գիտէին թէ երբ կ'պուտակ լոյսը, շատ մը փորձերէ ու վիշտերէ վերջ, բաժնուի մարմինէն, պիտի գտնէ լոյս և ջերմութիւն։ Պիտի ըլլայ հոն ինչպէս առաւօտ մը գարնանաշունչ, և հոգին պիտի վերածնանի գեղեցիկ, ազատ ու երիտաւոր։

սայլի, Սէվոյի անունները՝ անէծքի ու փոխվրէժի հոմանիշներ եղան, մաղթենք որ փարիզու հաշտութեան համաժողովը, հանուր մարդկութեան համար՝ յառախաբարեան և յուսահատութեան յուշակոթողը չըլլայ։

Հ. Յ. Բ.

Նոյն գիշերը, երբ վերագարձայ սենեակս, որ կը նայի San Gallo-ի հրապարակին մէջ՝ Cappellina-ի վրայ, կանչեցի Տանտիրուհին որ ագնիւ կին մ'էր և, իբր մայր մը գորովասիրտ, կը հոգար ու կը խնամէր այն քանի մը հոգիները որոնք, պարագաներէն



Հայաստէր Քանադացի բանաստեղծ
LAURENCE DAKIN

ստիպուած, հեռացեր էին իրենց ընտանեկան յարկերէն։

«Պատմէ ինձի - աղբրոցի իրեն - պատմէ լճակին մէջ գտնուող այն փոքր կղզեակի մասին, ուր կայ մենաստան մը, տեղ մը ուր կը բնակի Աստուած»։

Տիկինը ժպտելով ինձի նայեցաւ ու պար-


զուծեամբ ըսաւ. «Աստուած կը բնակի ամէն տեղ»։

«Կարելի է այդ - պատասխանեցի ես - բայց ուր Աստուած է, հոն կայ ջերմութիւն և խաղաղութիւն, և ահա թէ ինչու մարդ՝ այդ կղզեակին մէջ՝ կը զգայ սոյն առաւելութիւնը, կը զգայ թէ աւելի մերձ է Աստուծոյ»։

«San Lazzaro կը կոչուի այդ կղզին - պատասխանեց տիկինը - տասնեւութ դարու սկիզբէն, սեփականութիւն հայ Մխիթարեան Միաբանութեան, որ հիմնուած է Կ. Պոլիս 1701-ին. Մխիթար Պետրոսեան անուն քահանայի մը ձեռքով։ Եւ հիմնադրին նուրբ ու լուսափայլ հոգին ժառանգութիւն մը դարձած է իր հետեւողներուն, որոնք բոլոր կրօնական հաստատութեանց մէջ, ամենէն գիտուններն ու յարգուածները համարուած են»։

«Ուսուցչութիւն ալ կ'ընէն», ընդհատեցի ես։

«Այո՛ - պատասխանեց - և անհամար է թիւն անոնց՝ որոնք իրենց ընկերական դիրքը՝ աշխարհիս մէջ՝ այս Հայրերուն կը պարտին. և ասոնք, իրենց խոր գիտութեամբ և իմաստութեամբ, բոլոր գիտնական ու բարձրաստիճան մարդոց հիացումը գրաւած են։ Նա փոշեման իր պաշտպանութիւնը շնորհեց անոնց։ Պայրն, ինչպէս մանուկ մը իր մօրը, անոնց դիմեց երբ վատթարումը և յուսահատութիւնը իր սիրտը կը կրճէին, և անոնք բարեսիրտ գտնուեցան ու իրեն պարգեւեցին մտքի իմաստութիւն։ Պայրն անոնցմէ սուրվեցաւ հայերէն լեզուն, որովհետեւ հայ էին անոնք և Հայաստանէն գաղթած. երկիր մը ուր Ս. Գիրքը գետեղած էր Եդեմի Պարտէզը - ըսաւ տիկինը - այնքան գեղեցիկ և հրապուրիչ է այդ երկիրը։ Գիշեր ատեն, երբ երկնքի կամարէն լիալուսինն իր արծաթեայ լարաւոր երաժշտութեան ձայները, անշարժ ջուրերու վրայէն սահելով, Պայրնի ականջին կը հասնէին, բանաստեղծը սովոր էր նետուել



լճակին մէջ ու լողալով դիմել դէպի զբօսա-
վայրը, ուր կը մնար այնչափ ատեն որքան
կարեւոր էր քիչ մը շունչ առնելու համար, և
տեսնելու թէ ինչպէս արեղաներուն զգաստ
և առողջ միտքը մաքրագործներ էր իր հոգին
... ու յետոյ ետ կը վերադառնար: Նաեւ
Ուրսքին - շարունակեց տիկինը -, որ իր
ամենէն նուրբ ու գեղեցիկ գործը (The
stones of Venice) քանդակեց մեր քարե-
րուն վրայ, հատոյց իր հարկը արեղաներուն:
Նոյնը ըրաւ Լոնկֆելտը ամերիկեան քեր-
թողը. նոյնը ըրին մերինները, և պիտի
շարունակեն ընել բոլոր քերթողները: Որով-
հետեւ անոնք, ամենէն աւելի, կ'ըմբռնեն
աշխարհիս մեծ սիրտը ու կը ճանչնան անոր
պէտքերը »:

« Ատիկա նման է ծաղիկի մը որ կ'աճի
հաւատքի ճիւղին վրայ - ըսի ես -, նման
է զարգացման շիւղի մը զոր մեր հայրերը
ճանչցան »:

« Այո՛ - պատասխանեց տիկինը -, ալիք
մըն է զարգացման որ կը լուայ կը սրբէ
աշխարհս, օղակ մըն է շղթայի՝ Հայոց փոքր
աշխարհին և ընդհանուր աշխարհիս ժողո-
վըրդոց միջեւ: Անոնք հոն, իրենց առանձնու-
թեան ժամերուն մէջ, հայրենի լեզուին դար-
ձուցին բոլոր ժողովրդոց դասական ընտիր
գործերը »:

Հարցուցի թէ արդեօք կարելի՞ էր այցելել
կղզին »:

« Այո՛ - պատասխանեց -, և դու պէտք է
երթաս հոն, տեսնելու համար երկու հազար
հայերէն հին ձեռագիր մատեաններ, երեսուն
հազար գիրքեր, ու գեղարուեստական անթիւ
առարկաներ. բոլորն ալ հետաքրքրական »:

« Վենետիկեան աշտարակները հեռուն

կը շողային հանգուակ ցընորական տեսիլքի »:

Մեղունները կ'աշխատէին ծծելու, գանգրա-
գեղ առուոյաներու ծոցէն, այն նեկտարը
զոր յետոյ, երախտապարտ զգացումով,
մեղրի պիտի վերածէին. կ'աշխատէին ժրա-
ջան ու բղղալով ծաղիկէ ծաղիկ կը սլանային:
Վերեւ, փայլփլուն տերեւները կը քթթէին,

զլուխ կը ծռէին տաքուկ արեւուն. մինչ-
դեռ լճակին մէջ գողտրիկ ալեակները կը
ծփծփային Quattro Fontane-ի թումբերը
ծածկող կարծր քարերուն դէմ: Իսկ ես,
քանի մ'օր վերջ, խաղաղ առտու մը, այդ
թումբերէն մէկուն վրայ թեթեւ մ'ընկող-
մանած, ամրան քնարեր օդին մէջէն կը
դիտէի Վենետիկը, կը դիտէի կարմիր փո-
քրիկ կղզեակը Ս. Ղազարու:

« Կղզեակը, պարոն, Սուրբ Ղազարու
կղզեակը », գոչեց ձկնորս մը, լիայոյս,
դէպի ինծի քշելով իր փոքրիկ նաւակը,
որուն խորը կը գտնուէին ժլատ ուռկան
մը և քանի մը փոքրիկ խեչափառներ:
« Այո՛, այո՛ », պատասխանեցի, ու նոյն
պահուն, թէեւ մտքէս չէր անցած, զգացի
փափաք մը հոն երթալու. Մտայ մէջը նա-
ւակին ու սկսայ զբօսնուլ - ինչպէս Պետրոս
ալ դարեր առաջ՝ երբ տակաւին պատանի,
Գալիլիայի ջուրերուն վրայ զբօսած պիտի
ըլլար, դիտելով բազմասրուն փոքրիկ խե-
ցեմորթ մը որ, շփոթած շմորած, կը
թափառէր նաւակին խորը -, մինչդեռ
ձկնորսը դիւ կը տանէր այդ կղզին: Հոն
հանդիպեցայ Հայրերէն մէկուն որ ինծի
ընկերեց մենաստանին ու բոլոր կղզիին մէջ.
այդ ամէնը ինծի իբր երազ թուեցաւ:
Ու հիմայ երբ պահ մը ետ կը նայիմ, ինծի
այնպէս կ'երեւնայ թէ գետի մը վրայէն
անցեր էի դէպի միւս եզերքը, թողով ետեւ
ամէն հոգ ու մտածութիւն աշխարհային:
Հոս էր ահա Պայրընի Ուսումնարանը, որուն
դրան վրայ կախուած էր բանաստեղծին մէկ
իւզաների պատկերը: Տեսայ հոն, Գանուլայի
ձեռակերտ՝ մանուկի մը զգայուն, քնքոյշ
արձանիկը: Ուրիշ արձանիկ մ'ալ մարմարէ,
նոյնպէս Գանուլայի գործ, որ կը ներկայացը-
նէր խաղաղ, հեղաճարձ, պատկառելի
հայրապետ մը՝ գիտութեամբ և հանճարով
գերազանց: Մենաստանին գետնայարկին
մէջ այցելեցի տպարանը, այն մամուլը ուս-
կից՝ արեւմուտքի անծանօթ՝ նրբաճաշակ
ու ճարտարարուեստ գիրքեր ու պարբե-

րականներ լոյս տեսած ու սփռուած են
աշխարհիս մէջ: Առաջին յարկը կը պա-
րունակէր թանգարանը, ուր կային աստե-
ղաբաշխական գործիներ, որոնք հին կոթ-
սուած օրերուն վրայ մեզի կը խօսէին:
Քաղաքացւոց պէս Հայերն ալ հին ժողո-
վուրդ մըն էին. ծանօթ էր իրենց տիեզերքի
գիտութիւնը, աստղերուն փառքը, ու իրենց
արեւելեան մտքովը կ'ըմբռնէին թէ Աստու-
ծոյ միութիւնը բնութեան հետ՝ այնքան
ճշմարիտ էր որքան անհատին էութիւնը
(entity of self). թէ գեղեցկութեան՝ այս
դիւաւոր բարիքին միջոցաւ է որ հոգին ունի
գոյութիւն. թէ յուզուող, տրամաբանող
անհատէն (emotional reasoning self) ա-
ռաջ եկաւ փորձառութիւնը, գիտութիւնը,
անով է որ անհատը (entity) զարգացաւ:
Բայց հոգին, նման տաւիղի մը մէկ ձայ-
նանշին (note), նման աստղի մը ցոլացու-
մին, իր գոյութիւնը ստացաւ, երբ Աստուծոյ
Ձեռքն անոր հպեցաւ, ու կ'ապրի՝ մի միայն
Անոր հետ հաղորդակցութեան միջոցաւ:

Հոն վենետիկեան օրուան մեղմ լոյսին
մէջ յապաղեցայ ես, երազելով ու թափա-
ռելով անցեալի մառախուղին մէջ: Քովս
կեցած էր Հայրը որ կարծես ինքն ալ կը
խորհէր, ընկղմած իմ միեւնոյն երազներուս
մէջ: Իր խոհերուն ջերմութիւնը ինծի հասաւ
իբր քնքոյշ երաժշտութիւն մը, և իր լուս-
թիւնը, այնքան խոր ու անխռով, աւելի
ներշնչող ու հաղորդական էր քան թէ իր
խօսքը, ճանչցայ և ըմբռնեցի իր կեանքին
բարձր գեղեցկութիւնը, և ինքն ալ գուշա-
կեց որ ճանչցեր էի զայն: Երբ դէպի իրեն
դարձայ հրաժեշտի ողջոյն տալու, ժպտե-
ցաւ ինծի: Հայրապետի մը ժպտն էր ան,
երիցագոյնի մը խոր անդորր հոգին որ
կրտսերագոյնի մը կը հաղորդուէր, ալիք
մը որ հոգիին կը ներշնչէր աւելի ազնուական
ու բարձր ճշմարտութիւն մը, աւելի նոր և
նուրբ ըմբռնում մը Աստուծոյ գաղափարին:

LAURENCE DAKIN

Թրգմ. Հ. Փ. Ե.

ԱՐՄԱԽԻՐԵԱՆ

ԱՅԳԱԾԱՂԻԿ

Այդը երբոր վարդակարմիր երկունքով
իբրեւ ծաղիկ մ'արշալոյսի արգանդէն
լոյսի, խինդի նուրբ ծըւէններ սփռելով
Մութի սեմին վրայ կը բացուի վեհօրէն՝
Կը թըւի մեզ թէ մանկութիւնն աղածրի
Կը վերածնի կենսազըւարթ ժըպիտով,
Ու կեանքն հիմէն երանական կը կանգնի՝
Իբր հրաշագործ երջանկութիւն ու գորով:
Յաւն ու պատրանք, կարծես յաւէտ նետահար
Սահմաններէն մեր կը խուսէն մուրրուն՝
Երբ աչքերուդ դէմ հորիզոնն այդ պայծառ
Կը դաշներգէ գիւթանքն իր վառ գոյներուն:
Այգածաղիկ, քերթուածներուս արշալոյս,
Ծաղկոցն հոգւոյս՝ ուր բոյր և լոյս սրտակաթ,
Ծընունդ տըւին գեղեցկութեանցս հոգեյոյզ՝
Նորոգէ՛ յար իմ մանկութեանս գեղ զըւարթ:

7 Յուլիս 1946